ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ածանցների ուսուցման մեթոդները ավագ դպրոցում

Կատարող՝ Հասմիկ Աղանիկի Հեբոյան

Ղեկավար՝ Գ.Խալաթյան մանկավարժական գիտությունների թեկնածու պրոֆեսոր

ԵՐԵՎԱՆ 2022թ.

Ածանցների ուսուցման մեթոդներն ավագ դպրոցում

Հայոց լեզուն հայ ժողովրդի հարատևման, նրա ազգային ինքնության պահպանման և ազգային մշակույթի բարձրագույն ձև է: Հայոց լեզուն է, որ դարեր շարունակ հայ ժողովրդին պահել է հայ, երկիրը՝ Հայաստան:

Ինչպես ամեն կենդանի լեզու, այնպես էլ հայոց լեզուն ժամանակի ընթացքում փոխվում է, կատարելագործվում: Ամենից շատ փոփոխությունների է ենթարկվում բառապաշարը: Կյանքում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց՝ առաջանում են նոր բառեր, իմաստափոխվում, փոխանցումներ կատարվում լեզվից լեզու, հնանում, դուրս գալիս գործածությունից և այլն:

Հայոց լեզվի գաղտնիքներին խորամուխ է դարձնում իր սաներին և իր առջև ծառացած պատվավոր, դժվարին խնդիրներն իրագործելու համար լավ ուսուցիչը աշխատում է յուրաքանչյուր դաս դարձնել տեսանելի, լսելի և առավել ընկալելի:

Բառապաշարի հարստացման ու զարգացման կարևորագույն միջոցներից են ածանցները: Դրանք մեր լեզվի հարստությունն են, քանի որ նրանցով կազմվում են անհամար քանակով նորանոր բառեր և հարստացնում մեր լեզվի բառապաշարը:Հայերենը հարուստ է բազմաթիվ ածանցներով, որոնք առաջացել են մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում: Բառապաշարի համալրումն ածանցավոր բառերով ընթանում է հայերենի կենսունակ ածանցների ծավալմամբ ու զարգացմամբ:

Ածանցումը՝ որպես բառակազմական գործուն եղանակ, մեծ դեր ունի մեր լեզվի հարստացման գործում։

Ուստի խիստ կարևորվում է ածանցների ուսուցումը՝ որպես բառակազմական բաղադրիչների, որպես աշակերտների բառապաշարի հարստացման միջոց, որոնք նպաստում են աշխարհայացքի և ճանաչողության ընդլայնմանը։

Ածանցների ուսուցմանը ավագ դպրոցի 10-րդ դասարանում ուսումնական ծրագրով հատկացված է երեք դասաժամ՝ «ածանցումը որպես բառակազմական եղանակ» թեմայով։

Ուսուցման նպատակներն են՝

- իմանալ ածանցման նշանակությունը բառապաշարի հարստացման գործում
- ընկալել լեզվի զարգացման տարբեր փուլերում ածանցների առաջացման ուղիները
- կարողանալ տարբերել ածանցը վերջավորությունից
- իմանալ ածանցների տեսակները ըստ դիրքի, ըստ ձևի (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլն) և իմաստի (հոմանիշ, հականիշ, համանուն և այլն)
- ամրապնդել և համակարգել աշակերտների գիտելիքները ածանցների մասին։

Ածանցների ուսուցման մեթոդները բազմազան են ու տարատեսակ։ Մանկավարժության մեջ դրանք պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և նոր կամ ժամանակակից։ Մենք կնախընտրենք ածանցերի ուսուցման նոր կամ ժամանակակից մեթոդները։

Քանի որ ավագ դպրոցի աշակերտները տարրական և միջին դասարաններում արդեն ծանոթ են ածանցներին և ածանցմանը, ուստի թեման ուսուցելիս մենք, որպես մեթոդ ընտրում ենք «Մտագրոհը»։ Սա մտքի տարափ է, խմբային աշխատանքի արդյունավետ մեթոդ։ Աշակերտների խմբի առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից

յուրաքանչյուրն արտահայտում է իր սեփական տեսակետները՝ լինեն դրանք ճի՞շտ, թե՞ սխալ։ Առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի՝ աշակերտների բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա։

Գերադասելի է մաքուր սպիտակ պատի տախտակներով գրատախտակը (թուղթը), որի վրա աշխատում ենք հատուկ ֆլոմաստերներով, որը հեշտ ջնջվում է։ Գրատախտակի կենտրոնում գծում ենք շրջան և գրում ուսուցվող թեման՝ «Հայերենի ածանցները»։

Խմբին առաջարկում ենք վերհիշել ածանցների մասին ունեցած գիտելիքները և թվարկել դրանք։ Թվարկածները տեսողականացնում ենք. կա՛մ գրառում ենք գրատախտակին, կա՛մ կպչուն թղթերի վրա գրածները ամրացնում ենք շրջանագծից գծերով տարվող ուղղությունների վրա



Անդադար գրանցում ենք աշակերտների կարծիքները, նրանց մտքի տարափը, մշակում մտքի քարտեզ։

Թիմի հետ վերլուծում ենք, վերհիշում, հաստատում գիտելիքները ածանցների վերաբերյալ։

Այնուհետև գրատախտակին գրում ենք կամ աշակերտներին բաժանում ենք թերթիկ-քարտիկներ, որոնց վրա գծակարգի առաջին սյունակում գրում ենք պարզ արմատական բառեր, իսկ մյուս սյունակներում՝ այդ բառերի ածանցված ձևերը։ Խմբի հետ միասին դրանք համեմատում ու հակադրում ենք միմյանց, պարզում յուրաքանչյուր շարքում եղած բառերի նմանություններն ու տարբերությունները՝ ինչպես ըստ կազմության, այնպես էլ ըստ իմաստի։ Դրանով պարզ է դառնում, թե բառի կազմության փոփոխությունը իմաստային ինչպիսի փոփոխություն է առաջացրել տվյալ բառի մեջ։

տուն	տնակ	տնային	անտուն
աշակերտ	աշակերտական	աշակերտուհի	աշակերտություն
ընկեր	անընկեր	ընկերուհի	ընկերություն
վախ	անվախ	վախկոտ	վախկոտություն
գույն	անգույն	դժգույն	գունավոր

Ընդգծում ենք այդ մասնիկները՝ -ակ, -ային, ան-, -ական, -ունի, -ություն, -կոտ, դժ-, -ավոր։ Ամենապարզ համեմատությունից հետևում է, որ ամեն բառ նոր իմաստ է ստանում արմատին ավելացած նոր բաղադրիչի՝ մասնիկի շնորհիվ ։

Խմբի հետ միասին եզրակացնում ենք, որ ընդգծվածները բառակազմական բաղադրիչներ են, որոնք ավելացնելով արմատին կամ բառին, փոխում են նրա իմաստը կամ խոսքիմաստային պատկանելիությունը, ավելացնում նոր իմաստ։

Դրանք, ի տարբերություն բառակազմական հիմնական բաղադրիչների՝ արմատների, երկրորդական բաղադրիչներ են՝ ածանցներ։

Սահմանում ենք՝

- *Արմատներին և բառերին լրացուցիչ իմաստներ տվող և նոր բառեր կազմող բաղադրիչները կոչվում են ածանցներ։*
- *Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր բառեր։*

Ածանցների տեսակները

Ածանցների տեսակների մասին գիտելիքները վերհիշելու և ամրապնդելու համար կիրառում ենք «Աշակերտների աշխատանքի թիմային մեթոդը»։ Դասարանը բաժանում ենք 4-5 անդամներից բաղկացած խմբերի, որոնցում ընդգրկվում են ինչպես ուժեղ, այնպես էլ միջին և թույլ կարողությունների տեր աշակերտներ։ Նրանց բաժանում ենք թերթիկներ։ Թիմի անդամները սկզբում կարդում են թերթիկի վրա զետեղված առաջադրանքները, ապա միմյանց օգնելով, քննարկումներ ծավալելով՝ կատարում են առաջադրանքը։ Այնուհետև հանդես են գալիս առաջադրանքի պահանջների կատարմամբ և ներկայացնում ամբողջ դասարանին։

1. *Թերթիկներն ընդգրկում են հետևյալ կարգի առաջադրանքները.*

1.1 Փակագծերում տրված արմատներից յուրաքանչյուրին կցել որևէ ժխտական ածանց (բացի ան-ից) և կազմել ածանցավոր բառեր, որոնք լինեն հոմանիշ տրված բառերին.

1. ապերջանիկ –
2. անբարեձև -
3. գունատ -
4. անհոժար -
5. անուս, անգրագետ -
6. անգոհունակ -
7. ծաղր, ծամածռություն -
8. անախորժ -

(գույն, գետ, բախտ, նազ, գոհ, կամ(ք), ձև, հաճ)

1.2 Նշել, թե որ դիրքում են գտնվում այդ ածանցները։

2. *Լրացնել բաց թողնված ածանցները, նշել թե որ դիրքում են գտնվում։*

1. նորակառույց հիվանդ…
   անբուժելի հիվանդ…
2. բամբաս… կանայք
   թունոտ բամբաս…
3. անձրև… եղանակ
   նորաձև անձրև…
4. ուսումն… տարի
   նորաբաց ուսումն…
5. գիշեր… հավք
   մետաքսե գիշեր…
6. ամառ… արձակուրդ
   զովաշունչ ամառ…
7. Բուրդ… գուլպա
   բուրդ… ոչխար
8. բանա… պատասխան
   սնագործ բան…
9. նորոգված բնակ…
   բնակ… շենք

• Արմատներին ավելացնել համապատասխան ածանցներ, կազմել ածանցավոր բառեր։ Նշել, թե որ դիրքում են գտնվում։





Աշխատանքներն ավարտելուց հետո յուրաքանչյուր թիմից մեկը (ընտրում են թիմակիցները) ներկայացնում է թիմի կատարած աշխատանքը։

Ածանցների դիրքերը ցույց են տալիս, որ նրանք արմատի կամ բառի համեմատությամբ ունեն 2 դիրք. դրվում են արմատի կամ բառի սկզբից կամ վերջից։

Թիմերը եզրակացնում են, որ հայերենի ածանցները ըստ դիրքի լինում են 2 տեսակ՝ նախածանցներ և վերջածանցներ։

Սահմանում ենք՝

- Բառին սկզբից ավելացող ածանցը կոչվում է նախածանց։

Օրինակներ ենք բերում՝ ան+գիր, տ+գետ, չ+կամ, դժ+բախտ, առ+հավետ, մակ+երևույթ, թեր+ուս, դեր+բայ և այլն։

Նախածանցները լինում են դրական և ժխտական։ Ցուցադրում ենք «Դրական և ժխտական ածանցների» գծապատկերը։ Պարզաբանում, որ ժխտական նախածանցները ավելի քիչ են, քան դրական նախածանցները։ Կատարում ենք թիմային գործնական աշխատանք՝ կազմել հինգական բառ ժխտական և դրական նախածանցներով։ Ներկայացնում, վերլուծում ու գնահատում ենք թիմային աշխատանքը։

- Բառին վերջից ավելացող ածանցը կոչվում է վերջածանց։

Օրինակ՝ ծալ+ք, խայթ+ոց, հն+ոտի, մտած+կոտ, համոզ+իչ, տենչ+ալի։

Բառին կամ արմատին կարող են ավելանալ հաջորդաբար մեկից ավելի ածանցներ։

Օրինակ՝ ան+ուր+անալ+ի, լուսավոր+չ+ական+ություն, համա+ստորա+դաս+ական և այլն։

Ածանց և վերջավորություն

Հարց ու պատասխանի մջոցով պարզաբանում ենք, թե ինչ տարբերություն կա ածանցի և վերջավորության միջև։ Համապատասխան գործնական աշխատանքի միջոցով բացահայտում ենք ածանցների և վերջավորությունների հիմնական տարբերությունը։ Գալիս ենք այն եզրակացության, որ ածանցներն ավելանալով բառի կամ արմատի վրա, փոխում են նրա իմաստը, իսկ վերջավորություններն ավելանում են բառի վերջին և նոր բառ չեն կազմում, այլ բառին տալիս են քերականական տարբեր նշանակություններ։

Օրինակ՝ աշակերտից, սեղաններ բառերում ից-ը բառին տվել է բացառական հոլովի իմաստ, իսկ ներ մասնիկը՝ հոգնակիության իմաստ։ Իսկ աշակերտական, հիվանդանոց բառերում ական-ը և անոց-ը փոխել են բառերի իմաստը։

Հանձնարարում ենք գեղարվեստական արձակից դուրս գրել մի փոքրիկ հատված և ընդգծել ածանցներն ու վերջավորությունները։

Ածանցների առաջացման հիմնական ուղիները

Այս թեմայի շուրջ աշակերտները լսում են փոքրիկ դասախոսություն մեր կողմից, որում բացահայտում ենք, թե ինչ եղանակով են առաջացել հայերենի ածանցները լեզվի զարգացման տարբեր փուլերում։

- Քանի որ լեզուն անընդհատ փոփոխվում է, զարգանում, տեղի է ունենում արմատի իմաստի մթագնում. օրինակ՝ որդի բառից առաջ

(օրի+որդ=իշխանի որդի), առաջացել է որդ վերջածանցը՝ սայլորդ, գնորդ, դիմորդ և այլն։

• Հոլովական իմաստի մթագնում, երբ հոլովական վերջավորությունը գիտակցվում է որպես ածանց։ Օրինակ՝ ջրի, աղի, արժանի բառերում ի-ն սեռական հոլովի վերջավորություն է և վերածվել է ածանցի։

Բացառականի –ուց վերջավորությունից առաջացել է –ուց ածանցը (մանկուց, հնուց, վաղուց, դեղնուց և այլն)։

• Ածանցների առաջացման մյուս եղանակը արմատների հնչյունափոխությունն է։ Այսպես՝ -ոտ ածանցը առաջացել է հոտ բառից՝ հ-ի անկումով (ցեխոտ, ժանգոտ), -ատ ածանցը՝ հատ արմատից (պոչատ, գունատ)։

Մի շարք ածանցներ առաջացել են 5-6-րդ դարերում՝ արհեստական ձևով որոշ հնչյուններ կտրելու միջոցով, ինչպես՝ ապ-, արտ-, -բար, դեր-, ենթ-, ստոր-, և այլն։

• Հայերենի ածանցների առաջացման աղբյուր են հանդիսանում գրաբարի հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության մասնիկները. օրինակ՝ ք հոգնակիակերտ մասնիկը արդի հայերենում հանդես է գալիս իբրև ածանց, ինչպես գիրք, կայնք, փառք, միտք, վազք և այլն։

Հանձնարարվում է աշակերտներին համապատասխան վարժություններ՝ կատարելու բառակազմական վերլուծություններ, կազմել տրված ածանցներով բառեր, դրանք գործածել նախադասությունների մեջ և այլն։

Ածանցները ըստ ձևի և իմաստի

Ածանցներն ըստ ձևաբնական հատկանիշի, այսինքն, թե տվյալ ածանցով ինչ խոսքի մասեր են կազմվում լինում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլն։

Գոյականակերտ են կոչվում արմատից կամ բառից գոյական կազմող ածանցները։ օրինակ՝ գր-իչ, կար-իք, խց-ան, մարդ-իկ, տնտես-ություն, բան-վոր-ուհի և այլն։ Ցուցադրում ենք գոյականակերտ վերջածանցների գծապատկերը.

-ակ գնդակ, գետակ, տնակ, իմաստակ, բուժակ, պահակ, արգելակ, սահնակ, օրինակ

-ածո պահածո, բրածո, հանածո

-ան իշխան, վիպասան, ձգան, փական, խցան

-անք աշխատանք, երազանք, պարսավանք, տանջանք, Վարդանանք, Մեժլումանք

-անակ ըմպանակ, մրցանակ, հաղթանակ

-անոց հիվանդանոց, ծաղկանոց, արհեստանոց, հյուրանոց կոպեկանոց, հարյուրանեց

-արան թանգարան, գործարան, լսարան, ուսումնարան

-արք գործարք, ստուգարք, լուծարք

-եղեն պղնձեղեն, ոսկեղեն, ամանեղեն, արծաթեղեն

-ենք Մարգարենք, Չալոյենք, Մադաթենք

-իկ մայրիկ, հայրիկ, քույրիկ, ռազմիկ, մարտիկ

-իչ նկարիչ, երգիչ, բրիչ, քերիչ, գործիչ, ուսուցիչ

-իք չարիք, բարիք, կարծիք, կեղծիք ինչպես նաև -մունք, -(յ)ակ, -յուն, -ոնք, -որդ, -ոց, -չեք, -պան, -ստան և այլն։

Գոյականներ են կերտում նաև հետևյալ նախածանցները՝ անդր-, արտա(ա)-, դեր-, ենթա-, մակ-, պարա-, տրամա-, փոխ(ա)-։

Աշակերտներին հանձնարարում ենք հարցեր և վարժություններ՝

<u>Հարցեր</u>

- Ի՞նչ է ածանցումը։
- Ի՞նչ ճանապարհով են առաջանում ածանցները։
- Ի՞նչ խոսքի մասեր են կազմում ածանցները։
- Քանի՞ տեսակի են լինում ածանցները ըստ դիրքի։

<u>Վարժություններ</u>

- Կազմել երեքական բառ ածանցներով։
- Տրված տեքստից դուրս գրել ածանցավոր բառերը, նշել, թե ինչ խոսքի մասի են պատկանում։
- Յուրաքանչյուր սյունակից ընտրել մեկական նախածանց և արմատ՝ կազմել վեց նախածանցավոր բառ։
- Տրված սյունակներից ընտրելով մեկական արմատ և վերջածանց՝ կազմել վեց վերջածանցավոր բառ։

Աշակերտներին հանձնարարում ենք ընտրել գոյականակերտ ածանցներ և կազմել 30 գոյական։

Աշակերտներին մղում ենք հետազոտական աշխատանքի։ Ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ և բայակերտ ածանցները ուսումնասիրել ինքնուրույն Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան հեղինակների «Ժամանակակից հայոց լեզու», հատոր 1, «Հնչյունաբանություն և բառագիտություն» գրքի էջ 414-432 էջերը, որոնք ամփոփում են վերոհիշյալ ածանցները, ինչպես նաև հոմանիշ, հականիշ, համանուն ածանցները։ Ըստ դրանց՝ կազմել համապատասխան գծակարգեր, դուրս գրել համապատասխան օրինակներ, օգտագործել նախադասությունների մեջ։

Օգտագործված գրականության ցանկ

1.Ա.Ս.Մարգարյան <<Ժամանակակից հայոց լեզու>>

2.Ս.Ա.Գալստյան <<Ժամանակակից հայերենի վերջածանցների համաժամանակյա դասակարգման մի քանի հարցեր>>

3.Ֆ.Հակոբյան <<Բառակազմական վերլուծություն>>